

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Մայիսի 10—12-ը Մոսկվայում, Միությունների Տան սյունազարդ դահլիճում, կայացավ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսը։ Կոնֆերանսին ներկա էին ՍՍՌՄ տերիտորիայում բնակվող 48 ազգություններ ներկայացնող 1.019 դելեգատներ։ Դելեգատների թվում կային Սովետական Միության հերոսներ, հայրենական պատերազմի վետերաններ, սոցիալիստական աշխատանքի և ժողովրդական տնտեսության առաջավորներ, գրողներ, կոմպոզիտորներ, ակադեմիկոսներ, կրոնական տարբեր համոզմունքների տեր հոգևորականներ, արտասահմանյան հյուրեր։

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար Հայոց Եկեղեցու կողմից լիազորված էր Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Գերաշնորհ սրբազանը մայիսի 5-ին մեկնեց Մոսկվա մասնակցելու կոնֆերանսին։ Սրբազանին ուղեկցում էր բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Մայիսի 10-ին սկսվեցին կոնֆերանսի աշխատանքները։ Երեկոյան նիստում ընտրվում է 88 հոգուց բաղկացած նախագահություն։ Նախագահության կազմում, ի թիվս այլոց, ընտրվում են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին, Հայ Եկեղեցու ներկայացուցիչ՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, Կրուտիցկու և Կոլոմենայի միտրոպոլիտ Նիկոլայը, Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը, Ռիգայի Կաթոլիկական միտրոպոլիտի տեղակալ Պյոտր Ստրոդս եպիսկոպոսը, Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահի տեղակալը և ուրիշներ։ Կոնֆերանսին մասնակցում էր նաև Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկը։

Կոնֆերանսի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

1. Ժամանակակից միջազգային դրությունը և ժողովուրդների պայքարը խաղաղության պաշտպանության համար։

2. Հելսինկիի Խաղաղության համաշխարհային ասամբլեայի սովետական դելեգացիայի ընտրությունների հարցը։

3. Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կազմի նոր ընտրությունը։

Մայիսի 11-ի առավոտյան նիստին խոսք է տրվում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին, որի ճառը լսվում է մեծ ուշադրությամբ։ «Ռուսական Ուղղափառ Եկեղեցին,— ասում է Ալեքսի Պատրիարքը,— մեր Միության ժողովուրդների հետ միասին ձգտում է երկարատև խաղաղության և երջանիկ ուրախ կյանքի։ Նա ամբողջովին պաշտպանում է մեր պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը»։

Խոսք է տրվում նաև ՍՍՌՄ Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահին։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսը իր աշխատանքները հաջողությամբ ավարտեց մայիսի 12-ին։ Ընտրվեց 37 մարդուց բաղկացած սովետական դելեգացիա, որը պիտի մասնակցի Հելսինկիում կայանալիք Խաղաղության համաշխարհային ասամբլեային։ Կոնֆերանսը միահամուռ կերպով հաստատեց Խաղաղության համաշխարհային ասամբլեային ուղարկվելիք դիմումն ու կոչը։ Ընտրվեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նոր կազմ։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսին Հայ Եկեղեցին ուղարկելով իր ներկայացուցիչը, մի անգամ ևս ապացուցեց, որ՝ ինքը ամուր կանգնած է ժողովուրդների համար այնքան բաղձալի խաղաղության գործի պաշտպանության առաջավոր դիրքերում։ Հայ Եկեղեցին, հանձին իր ներկայացուցչի՝ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի, այս անգամ ևս իր ձայնը միացրեց Սովետական Միության խաղաղասեր ժողովուրդների և ազգությունների միասնական հավատավոր ձայնին՝ հանուն ժողովուրդների երջանիկ և բարօր կյանքի։

ցում։ Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը առանձին տեսակցություններ ունեցավ կոնֆերանսի աչքի ընկնող դելեգատների հետ։

***

Մոսկվայից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձին գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը կանգ առավ Թբիլիսիում։ Սրբազանը, չնայած Մայր Աթոռում կատարած ծանր պարտականություններին, միաժամանակ Թբիլիսիի թեմական առաջնորդն է։

Երկրորդ Դաղկազարդին, կիրակի օր, մայիսի 22-ին, Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ և

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսի Հայկական ՍՍՌ պատվիրակությունը

Մոսկվայում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը և բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը վայելեցին Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսի դելեգատների սրտագին բարեկամությունը և լավագույն հյուրընկալությունը Մոսկվայի «Վենինգրադ» հյուրանո-

սրբազանը խոսեց հոգեշունչ քարոզ՝ խաղաղության գաղափարի շուրջ, շեշտելով, որ այսօր ավելի քան երբեք, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ ժողովուրդը, որ հազարամյակներով զուրկ էին մնացել խաղաղությունից, կարիքն ունեն մնայուն խաղաղության։ Միաժամանակ սրբազանը մտածված և գեղեցիկ ոճով բնորոշեց խաղա-

ղության սրբազան նշանակությունը բոլոր ժողովուրդների համար, և հրավիրեց հավատացյալներին՝ սրտեռանդն աղոթել խաղաղության հաղթանակի համար ամբողջ աշխարհում և ժողովուրդների սրտում, որովհետև «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության մեջ կարմիր թելի նման անցնում է նրա խաղաղասիրական ձգտումը,— ասաց սրբազանը։

«Այսօր,— շարունակեց սրբազանը,— հավատացյալ հայ ժողովուրդը կանգնած է աշխարհի միլիոնավոր բարի կամքի տեր մարդկանց շարքերում, խաղաղասեր ժողովուրդների ընտանիքում, խաղաղության համար պայքարի առաջին շարքերում, աղոթելով ողջ աշխարհի խաղաղության համար, որպեսզի «լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»։

Սրբազանի սրտից, խորը համոզմունքներից բխած այս գեղեցիկ խաղաղասիրական քարոզը լսվեց մեծ ոգևորությամբ և հոգեկան բավարարությամբ։

Մայիսի 23-ին գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը բարեհաջող վերադարձավ Մայր աթոռ Ս. Էջմիածին։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ